

«Ռենեսա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

**2017թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ ատղիտորական եզրակացություն.....	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ռեմեսա» ՓԲԸ-ի Բաժնետերերին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Ռեմեսա» ՓԲԸ-ի («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԻ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ նշում

Ընկերության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2017թ. փետրվարի 17-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծքի արտահայտելու նպատակով:



«Ռենեսա» ՓԲԸ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Էջ 3

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան

Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ

23 ապրիլի 2018թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	1,678,762	1,198,908
Տոկոսային ծախս	4	(821,557)	(707,181)
Զուտ տոկոսային եկամուտ		857,205	491,727
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(1,077)	(931)
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		34,112	1,945
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		14,831	1,013
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից		124,739	157,186
Այլ գործառնական եկամուտ		17,399	9,997
Գործառնական եկամուտ		1,047,209	660,937
Անձնակազմի գծով ծախսեր		(49,569)	(42,455)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	5	(43,629)	(46,922)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		954,011	571,560
Շահութահարկի գծով ծախս	6	(192,424)	(114,229)
Շահույթ տարվա համար		761,587	457,331
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի			
<i>Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
- Իրական արժեքի զուտ փոփոխություն		546,261	678,777
- Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(98,443)	(110,603)
<i>Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>		<i>447,818</i>	<i>568,174</i>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ տարվա համար՝ առանց շահութահարկի		447,818	568,174
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք՝ տարվա համար		1,209,405	1,025,505

Ճ-ից 46-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են
ղեկավարության կողմից 2018թ. ապրիլի 23-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Վարչիմակ Սարգսյան
Գործադիր տնօրենի



Լիանա Հարությունյան
Գլխավոր հաշվապահ

«Ռենեսա» ՓԲԸ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	122,954	18,499
Ընկերության կողմից պահվող շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ		4,766	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Ընկերության կողմից պահվող	8	657,510	844,865
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	8	15,752,597	9,206,684
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	9	-	130,714
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	10	1,316,323	967,437
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	11	57,153	62,838
Այլ ակտիվներ	12	53,337	1,311
Ընդամենը ակտիվներ		17,964,640	11,232,348
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	13	14,728,480	8,942,106
Ընթացիկ հարկային պարտավորություն		104,671	50,429
Հետաձգված հարկային պարտավորություններ	6	248,698	136,009
Այլ պարտավորություններ		20,758	17,176
Ընդամենը պարտավորություններ		15,102,607	9,145,720
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	14	1,000,000	1,000,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		993,503	545,685
Գլխավոր պահուստ	14	106,943	83,612
Զբաղիված շահույթ		761,587	457,331
Ընդամենը սեփական կապիտալ		2,862,033	2,086,628
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		17,964,640	11,232,348

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծնթգ.	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ստացված տոկոսներ		1,800,025	1,177,083
Վճարված տոկոսներ		(797,627)	(708,844)
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ		(1,077)	(931)
Զուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		29,346	-
Իրացված օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով		124,739	157,186
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից		15,925	595
Այլ ստացված եկամուտ		17,399	11,266
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(84,415)	(68,671)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		(5,802,139)	(1,565,576)
Այլ ակտիվներ		(52,014)	339,504
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		5,710,098	1,662,959
Այլ պարտավորություններ		3,582	(1,287)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		963,842	1,003,284
Վճարված շահութահարկ		(137,444)	(16,329)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		826,398	986,955
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ		(94,592)	(130,586)
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունների մարում		225,049	-
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ		(5,452,867)	(640,390)
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունների մարում		4,980,897	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(3,098)	(2,771)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		(344,611)	(773,747)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ մուտքեր այլ փոխառությունների գծով		58,304	(213,527)
Վճարված շահաբաժիններ		(434,000)	(133,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		(375,696)	(346,527)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)		106,091	(133,319)
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,636)	843
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկան դրությամբ	7	18,499	150,975
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեկան դրությամբ	7	122,954	18,499

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ

	Ընկերության բաժնետերերին վերագրելի				
	Բաժնետիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագրման պահուստ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,000,000	(22,489)	76,517	140,095	1,194,123
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ տարվա համար	-	-	-	457,331	457,331
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկային ակտիվների/հետաձգված հարկային պարտավորությունների	-	678,777	-	-	678,777
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկային ակտիվների/հետաձգված հարկային պարտավորությունների	-	(110,603)	-	-	(110,603)
Ընդամենը հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	568,174	-	-	568,174
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	568,174	-	-	568,174
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	-	568,174	-	457,331	1,025,505
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործառնություններ սեփականատերերի հետ					
Հատկացում գլխավոր պահուստ	-	-	7,095	(7,095)	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(133,000)	(133,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	7,095	(140,095)	(133,000)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,000,000	545,685	83,612	457,331	2,086,628
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	1,000,000	545,685	83,612	457,331	2,086,628
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ տարվա համար	-	-	-	761,587	761,587
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկային ակտիվների/հետաձգված հարկային պարտավորությունների	-	546,261	-	-	546,261
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկային ակտիվների/հետաձգված հարկային պարտավորությունների	-	(98,443)	-	-	(98,443)
Ընդամենը հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	447,818	-	-	447,818
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	447,818	-	-	447,818
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	-	447,818	-	761,587	1,209,405
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործառնություններ սեփականատերերի հետ					
Հատկացում գլխավոր պահուստ	-	-	23,331	(23,331)	-
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(434,000)	(434,000)
Ընդամենը գործառնություններ սեփականատերերի հետ	-	-	23,331	(457,331)	(434,000)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,000,000	993,503	106,943	761,587	2,862,033

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Ռենեսա» ՓԲԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2001թ. ապրիլի 11-ին Հայաստանի Հանրապետությունում որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը ստացել է Բրոքերային գործունեության լիցենզիա Արժեթղթերի պետական հանձնաժողովի կողմից 2001թ. հունիսի 15-ին: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ընկերությունը 2008թ. հունիսի 27-ին վերագրանցվել է որպես ներդրումային ընկերություն և ստացել թիվ 5 լիցենզիա:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց 16:

Ընկերության հավասար մասնաբաժինով սեփականատերերն են հանդիսանում Արայիկ Կարապետյանը և Էդուարդ Մարությանը, ովքեր իրավասու են գործունեությունը ղեկավարել իրենց սեփական հայեցողությամբ և իրենց շահերից ելնելով: Բացի այդ, նրանք ունեն մի շարք մասնակցություններ Ընկերության հետ չառնչվող այլ կազմակերպություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Կին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Զափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների:

(զ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ էական անորոշ գնահատումների և կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 19-ում՝ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի գնահատման հետ կապված:

(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընկերությունը կիրառել է ստորև ներկայացվող ստանդարտների փոփոխությունները՝ 1 հունվարի 2017թ. սկզբնական կիրառման ամսաթվով:

- *Բացահայտման պահանջների վերանայում (ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ)*. ՀՀՄՍ 7 «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» ստանդարտը փոփոխվել է ՀՀՄՍԽ-ի ավելի լայնածավալ նախագծի շրջանակներում՝ ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացումը և բացահայտումը կատարելագործելու նպատակով: Փոփոխությունը պահանջում է այնպիսի բացահայտումներ, որոնք հնարավորություն կտան ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին գնահատել ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ՝ դրամական միջոցների հոսքերով պայմանավորված և դրամական միջոցների հոսքերով չպայմանավորված փոփոխությունները: Բացահայտման այս նոր պահանջի բավարարման միջոցներից մեկը ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների ժամանակաշարժանի սկզբի և ժամանակաշարժանի վերջի դրությամբ մնացորդների համադրման ներկայացումն է: Այնուամենայնիվ, փոփոխության նպատակը կարելի է ապահովել նաև այլ եղանակներով:

- Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված վնասի գծով (ՀՀՄՄ 12-ի փոփոխություններ). ՀՀՄՄ 12-ի «Շահութահարկ» ստանդարտի փոփոխությունները պարզաբանում են, որ նվազեցվող ժամանակավոր տարբերության առկայությունը կախված է միայն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա հարկման բազայի համեմատությունից և կախված չէ հաշվեկշռային արժեքի ապագա հնարավոր փոփոխություններից կամ ակտիվի փոխհատուցման ակնկալվող եղանակից: Այդ իսկ պատճառով, եթե առջնորդվենք այն ենթադրությամբ, որ հարկման բազան իրենից ներկայացնում է պարտքային գործիքի սկզբնական արժեքը, ապա գոյություն ունի ժամանակավոր տարբերություն: Փոփոխությունները ցույց են տալիս, որ կազմակերպությունը կարող է ճանաչել հետաձգված հարկային ակտիվ, եթե ակնկալվում է ապագա հարկային վնաս՝ որոշակի պայմաններ ապահովելու դեպքում:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոլվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի և ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում բանկային հաշիվները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու մոտ անցյալում տեղի ունեցած փաստացի դեպքերի վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական

երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ

- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկը բավարարելու դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանալիս այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Ընկերությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվադեպ հանգամանքներում: Հազվադեպ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Ընկերությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնց գծով Ընկերությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես փոխառություններ և դերիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվի կամ պարտավորության դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ դրանց վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- փոխառությունների և դերիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մաշի գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքիկումից կորուստը: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Ընկերությունը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույնն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ընկերությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը: Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Ընկերությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը ներառվում է ռեպո գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում՝ «ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ» հոդվածում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ՝ «ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ» հոդվածում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում ռեպո պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հետադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

(ix) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվելով գուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

— սարքավորումներ	3 տարի
— փոխադրամիջոցներ	5 տարի
— տնտեսական գույք	5 տարի
— այլ	5 տարի

(ե) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը փոխառուի կողմից, փոխառության պայմանագրի պայմանների խախտումները փոխառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, փոխառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող փոխառությունների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող փոխառությունների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են փոխառությունները և այլ դեբիտորական պարտքերը («փոխառություններ և դեբիտորական պարտքեր»): Ընկերությունը վերանայում է իր փոխառությունները և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ առանձին գնահատված փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ փոխառությունը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով փոխառությունների և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես փոխառության կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ փոխառության կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառում ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառությունների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Ընկերությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ փոխառության հավաքագրումը հնարավոր չէ, այն դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Ընկերությունը փոխառության մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ դեկավարությունը որոշում է, որ փոխառությունը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են փոխառության վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չզննվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և նմանատիպ ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույթով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

(iii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումներն ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեքի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեքի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(iv) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղջվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(գ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղջելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղջման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ե) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(ii) Շահաբաժիններ

Շահութաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակաշրջանում, երբ հայտարարվում են:

(ը) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Ընթացիկ հարկի գծով վճարվելիք գումարները ներառում են նաև շահաբաժինների գծով առաջացող հարկային պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման համար, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

(թ) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխառությունների տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես փոխառության ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժինը հայտարարելիս:

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

(ժ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացվող նոր ստանդարտները, այդ ստանդարտների փոփոխությունները և մեկնաբանությունները չէին գործում են 2017թ. հունվարի 1-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

Այդ ստանդարտներից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա սկզբնական կիրառման ժամանակահատվածում:

(ա) ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը գործում է 2018թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ: Այն փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը:

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է հրապարակել է «Վաղաժամկետ մարման պայման բացասական հատուցմամբ» (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ): Փոփոխությունները գործում են 2019թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Ընկերությունը կսկսի 2014թ. հուլիսին հրապարակված ՖՀՄՍ 9-ի կիրառումը 2018թ. հունվարի 1-ից և այդ նույն ամսաթվից ժամկետից շուտ կկիրառի ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Առ այսօր կատարած գնահատումներից ելնելով՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալի տարեսկզբի մնացորդի գծով ընդհանուր ճշգրտումը (առանց հարկերի) կազմում է 110,000 հազար դրամից 160,000 հազար դրամ և կապված է արժեզրկմանը վերաբերող պահանջների կիրառման հետ:

Վերը ներկայացված գնահատումը նախնական է, քանի որ նոր ստանդարտին անցման գործընթացը դեռևս ավարտված չէ: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 9-ի կիրառման փաստացի ազդեցությունը կարող է փոփոխվել, քանի որ՝

- ՖՀՄՍ 9-ի համաձայն Ընկերությունից պահանջում է հաշվապահական հաշվառման գործընթացների և ներքին վերահսկողության համակարգի վերանայում, և այս փոփոխությունները դեռևս ավարտված չեն,
- թեև 2017թ. երկրորդ կեսին Ընկերությունը վարել է զուգահեռ հաշվառում, նոր համակարգերը և դրանց հետ կապված վերահսկողության համակարգերը չեն գործել ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում,
- Ընկերությունը չի ավարտել իր նոր ՏՏ համակարգերը վերահսկող մեխանիզմների, ինչպես նաև կառավարման համակարգի փոփոխությունների փորձարկումը և գնահատումը,
- Ընկերությունը կարատելագործում է և ավարտում է իր մոդելների մշակումը սպասվող պարտքային վնասի հաշվարկի համար,

- հաշվապահական հաշվառման քաղաքականության նոր դրույթները, կիրառվող ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները կարող են փոփոխվել այնքան ժամանակ, մինչև որ Ընկերությունը չավարտի իր առաջին ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը, որոնք ներառում են սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ղեկավարությունն այս ազդեցությունն էական չի համարում հետագա գնահատումը բացահայտելու համար:

(բ) Այլ ստանդարտներ

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՄ-ների տարեկան կատարելագործումներ, 2014-2016թթ. ժամանակաշրջան – ՖՀՄՄ 1-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ*
- *Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների դասակարգում և չափում (ՖՀՄՄ 2-ի փոփոխություններ)*
- *Ներդրումային գույքի փոխանցում (ՀՀՄՄ 40-ի փոփոխություններ)*
- *Ակտիվների վաճառք կամ ներդրում ներդրողի և նրա կապակցված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկության միջև գործարքում (ՖՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 28-ի փոփոխություններ)*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարային հատուցումներ»*
- *ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»*

4 Զուտ տոկոսային եկամուտ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,526,735	1,114,370
Տրված փոխառություններ	145,720	84,460
Հետգնման պայմանագրեր	6,265	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42	78
	1,678,762	1,198,908
Տոկոսային ծախս		
Հետգնման պայմանագրեր	802,782	686,192
Ստացված վարկեր	4,876	20,313
Այլ փոխառություններ	13,899	676
	821,557	707,181

5 Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	8,783	17,865
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	8,750	6,000
Վերանորոգման և պահպանման ծախսեր	4,721	4,930
Կապի և տեղեկատվական ծառայություններ	4,639	3,291
Ներկայացուցչական ծախսեր	3,347	2,655
Վառելիքի գծով ծախսեր	2,721	2,694
Մասնագիտական ծառայություններ	2,510	3,000
Կոմունալ ծախսեր	1,457	1,138
Ապահովագրություն	1,232	1,362
Անդամակցության վճարներ	864	2,304
Գրասենյակային ծախսեր	500	239
Այլ	4,105	1,444
	43,629	46,922

6 Շահութահարկի գծով ծախս

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	191,686	114,404
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման և վերագնահատման պահուստի փոփոխությունների արդյունքում	738	(175)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	192,424	114,229

2017թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2016թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2017թ. հազ. դրամ	%	2016թ. հազ. դրամ	%
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	954,011		571,560	
Շահութահարկ՝ հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	(190,802)	(20.0)	(114,312)	(20.0)
Զնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտ)	(1,622)	(0.2)	83	-
	(192,424)	(20.2)	(114,229)	(20.0)

(ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են գուտ հետաձգված հարկային պարտավորություններ 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում:

2017թ.	Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	Ծախյություն կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.
հազ. դրամ				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(136,422)	-	(111,951)	(248,373)
Հիմնական միջոցներ	(3,015)	(1,383)	-	(4,398)
Այլ պարտավորություններ	3,428	645	-	4,073
	(136,009)	(738)	(111,951)	(248,698)

2016թ.	Մնացորդը առ 1 հունվարի 2016թ.	Ծախյություն կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.
հազ. դրամ				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	5,622	-	(142,044)	(136,422)
Հիմնական միջոցներ	(2,623)	(392)	-	(3,015)
Այլ պարտավորություններ	2,861	567	-	3,428
	5,860	175	(142,044)	(136,009)

(բ) Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի բաղադրիչներին վերաբերող հարկային հետևանքները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2017թ.			2016թ.		
հազ. դրամ	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	682,823	(136,562)	546,261	848,472	(169,695)	678,777
Ծախյոթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	(123,054)	24,611	(98,443)	(138,254)	27,651	(110,603)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	559,769	(111,951)	447,818	710,218	(142,044)	568,174

7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Բանկային հաշիվների մնացորդներ		
- 10 խոշոր հայկական բանկերում պահվող	116,601	15,810
- Այլ	6,353	2,689
	122,954	18,499

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

8 Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Ընկերության կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	268,906	703,420
Կորպորատիվ պարտատոմսեր՝ առանց վարկանիշի	229,701	141,445
Ընդամենը պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	498,607	844,865
Բաժնային ներդրումներ		
Կորպորատիվ բաժնետոմսեր	158,903	-
	657,510	844,865
Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		
ՀՀ կառավարության արժեթղթեր	15,752,597	9,206,684
	15,752,597	9,206,684

9 Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Կապակցված կողմ հանդիսացող ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	130,714

Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

10 Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Կապակցված կողմերին, բացառությամբ ֆինանսական կազմակերպություններին, տրված փոխառություններ	<u>1,316,323</u>	<u>967,437</u>

Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

(ա) Պարտքային ռիսկին ենթարկվածություն

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի երկու փոխառու (2016թ-ին՝ երկու), որոնց տրված փոխառությունների մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս փոխառությունների ընդհանուր գումարը կազմում է 1,316,323 հազար դրամ (2016թ-ին՝ 967,437 հազար դրամ):

(բ) Փոխառությունների մարման ժամկետները

Փոխառությունների մարման ժամկետները ներկայացված են ծանոթագրություն 15-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև պայմանագրով նախատեսված փոխառությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

11 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	7,888	120,897	11,806	6,169	146,760
Ավելացումներ	1,741	-	1,158	199	3,098
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,629	120,897	12,964	6,368	149,858
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ					
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	(7,434)	(69,283)	(3,604)	(3,601)	(83,922)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(597)	(6,256)	(1,335)	(595)	(8,783)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(8,031)	(75,539)	(4,939)	(4,196)	(92,705)
Հաշվեկշռային արժեք					
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,598	45,358	8,025	2,172	57,153
հազ. դրամ	Սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	7,548	120,897	11,806	3,738	143,989
Ավելացումներ	340	-	-	2,431	2,771
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,888	120,897	11,806	6,169	146,760
Մաշվածություն և ամորտիզացիա					
Մնացորդը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ	(6,884)	(53,283)	(2,426)	(3,464)	(66,057)
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	(550)	(16,000)	(1,178)	(137)	(17,865)
Մնացորդը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(7,434)	(69,283)	(3,604)	(3,601)	(83,922)
Հաշվեկշռային արժեք					
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	454	51,614	8,202	2,568	62,838
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	664	67,614	9,380	274	77,932

12 Այլ ակտիվներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Այլ ստացվելիք գումարներ	53,037	120
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	53,037	120
Նյութեր և պաշարներ	246	197
Կանխավճարներ	34	392
Փոխհատուցման ենթակա հարկեր	20	602
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	300	1,191
Ընդամենը այլ ակտիվներ	53,337	1,311

13 Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	14,697,826	8,897,841
Բանկերից ստացված վարկեր	30,654	44,265
	14,728,480	8,942,106

(ա) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների համադրում

հազ. դրամ	Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	8,942,106
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված փոփոխություններ	
Մուտքեր փոխառություններից	18,377,278
Փոխառությունների մարում	(18,318,974)
Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերի հետ կապված ընդամենը փոփոխություններ	58,304
Փոփոխությունների ազդեցությունը արտարժույթի փոխարժեքի վրա	(5,958)
Տոկոսային ծախսեր	821,557
Վճարված տոկոսներ	(797,627)
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,728,480

14 Բաժնետիրական կապիտալ և պահուստներ

(ա) Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 20,000 սովորական բաժնետոմսից (2016թ-ին՝ 20,000): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 50,000 դրամ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2017թ-ին Ընկերությունը հայտարարել է 434,000 հազար դրամ գումարով շահաբաժիններ կամ 21.7 հազար դրամ՝ մեկ բաժնետոմսի համար (2016թ-ին՝ 133,000 հազար դրամ կամ 6.7 հազար դրամ՝ մեկ բաժնետոմսի համար):

(գ) Գլխավոր պահուստ

Օրենսդրական պահանջների և Ընկերության կանոնադրության համաձայն՝ Ընկերությունն իր չբաշխված շահույթից պետք է ստեղծի բաշխման ոչ ենթակա նվազագույն պահուստ՝ բաժնետիրական կապիտալի 15%-ին հավասար գումարի չափով՝ ապագա վնասները ծածկելու համար: 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստը կազմում էր 106,943 հազար դրամ (2016թ-ին՝ 83,612 հազար դրամ):

15 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է Ընկերության գործունեության համար և Ընկերության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկեր, պարտքային ռիսկեր, իրացվելիության ռիսկեր, գործառնական ռիսկեր, իրավական ռիսկեր և հեղինակություն հետ կապված ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Ընկերությունը մշակել է էական ռիսկերի և կապիտալի վերաբերյալ հաշվետվությունների համակարգ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող Ընկերության ներքին փաստաթղթերը, որոնք սահմանում են Ընկերության համար էական համարվող ռիսկերի բացահայտման և կառավարման մեթոդաբանությունը և այդ ռիսկերի գծով ստրես-թեստերի իրականացումը, հաստատված են Ընկերության իրավասու ղեկավար մարմնի կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի և առաջարկությունների համաձայն:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ընկերության դեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար՝ սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու նպատակով: Գործադիր տնօրենը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման և համապատասխանության ապահովման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Գործադիր տնօրենն ուղղակիորեն հաշվետու է Տնօրենների խորհրդին:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են կազմակերպության շրջանակներում: Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված ընթացիկ միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների փոփոխության ժամկետների, արտարժույթի դիրքերի և վնասի սահմանաչափերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են Գործադիր տնօրենի կողմից:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անապասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2017թ. ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	122,954	-	-	-	-	-	122,954
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	216,301	965,221	756,830	10,920,752	3,392,100	158,903	16,410,107
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	130,389	824,884	361,050	-	-	-	1,316,323
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	53,037	53,037
	469,644	1,790,105	1,117,880	10,920,752	3,392,100	211,940	17,902,421
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(14,701,371)	(3,389)	(6,777)	(16,943)	-	-	(14,728,480)
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	(5,487)	(5,487)
	(14,701,371)	(3,389)	(6,777)	(16,943)	-	(5,487)	(14,733,967)
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	4,766	-	-	-	-	-	4,766
	(14,226,961)	1,786,716	1,111,103	10,903,809	3,392,100	206,453	3,173,220
հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսակիր	Հաշվեկշռ. արժեք
31 դեկտեմբերի 2016թ. ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,499	-	-	-	-	-	18,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	428	2,943,309	342,451	6,619,734	145,627	-	10,051,549
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	130,714	-	-	-	-	-	130,714
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	513,177	454,260	-	-	-	-	967,437
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	120	120
	662,818	3,397,569	342,451	6,619,734	145,627	120	11,168,319
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(8,901,655)	(3,387)	(6,774)	(30,290)	-	-	(8,942,106)
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	(1,889)	(1,889)
	(8,901,655)	(3,387)	(6,774)	(30,290)	-	(1,889)	(8,943,995)
	(8,238,837)	3,394,182	335,677	6,589,444	145,627	(1,769)	2,224,324

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են նշված ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2017թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		2016թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Բանկային հաշիվներ	0.01	-	0.01	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	12.0	6.5	12.6	7.4
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	-	15.0	-
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	12.5	9.0	12.5	12.0
Տոկոսակիր պարտավորություններ		-		
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	6.9	11.3	9	11.3

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգալունության մոնիտորինգով: Ստորև ներկայացված է տոկոսադրույքների փոփոխությունների նկատմամբ զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգալունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության բոլոր կորերի գույքահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2017թ. ու 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
100 բկ գույքահեռ աճ	104,750	51,582
100 բկ գույքահեռ նվազում	(104,750)	(51,582)

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգալունության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի գույքահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2017թ. Սեփական կապիտալ հազ. դրամ	2016թ. Սեփական կապիտալ հազ. դրամ
100 բկ գույքահեռ նվազում	551,296	177,164
100 բկ գույքահեռ աճ	(551,296)	(177,164)

(ii) Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում: Թեև Ընկերությունը հեջավորում է իր ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին, այս գործունեությունը չի որակվում որպես հեջավորման փոխհարաբերություն ՖՀՄՍ պահանջների համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Ռուբլի հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,539	90,415	-	122,954
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	16,091,946	318,161	-	16,410,107
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	1,041,619	274,704	-	1,316,323
Այլ ֆինանսական ակտիվներ	12,482	40,555	-	53,037
Ընդամենը ակտիվներ	17,178,586	723,835	-	17,902,421
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(14,697,826)	(30,654)	-	(14,728,480)
Այլ ֆինանսական պարտավորություններ	(5,487)	-	-	(5,487)
Ընդամենը պարտավորություններ	(14,703,313)	(30,654)	-	(14,733,967)
Զուտ դիրքը	2,475,273	693,181	-	3,168,454
Ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունը	811,836	(855,815)	48,745	4,766
Զուտ դիրքը՝ ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ գործիքների ազդեցությունից հետո	3,287,109	(162,634)	48,745	3,173,220

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արտարժույթների 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ հազ. դրամ	ԱՄՆ դոլար հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,478	21	18,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	9,941,108	110,441	10,051,549
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	395,621	571,816	967,437
Այլ ֆինանսական ակտիվներ	120	-	120
Ընդամենը ակտիվներ	10,355,327	682,278	11,037,605
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(8,897,842)	(44,264)	(8,942,106)
Այլ ֆինանսական պարտավորություններ	(1,889)	-	(1,889)
Ընդամենը պարտավորություններ	(8,899,731)	(44,264)	(8,943,995)
Զուտ դիրքը	1,455,595	638,015	2,093,610

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը իրականացնելիս հարկերը հաշվի չեն առնվել և հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Ընկերությունը դիտարկում է որպես աղջամտորեն հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	(16,263)	63,802
Ռուբլու փոխարժեքի 10% արժևորում ՀՀ դրամի նկատմամբ	4,875	-

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի և ռուբլու նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառում կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Որպես կանոն գրավ չի պահանջվում ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պահանջների, արժեթղթերում կատարած ներդրումների և տրամադրված փոխատվությունների համար:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված բացահայտումները ներառում են ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք՝

- հաշվանցվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ
- հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ ֆինանսական գործիքները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, թե՛ ոչ:

Նմանատիպ պայմանագրեր են հանդիսանում ածանցյալ գործիքների քլիրինգային պայմանագրերը և հետգնման գլխավոր պայմանագրերը: Նմանատիպ ֆինանսական գործիքները ներառում են ածանցյալ գործիքները, վաճառքի և հետգնման պայմանագրերը:

Ընկերությունը ստանում և տրամադրում է գրավ դրամական միջոցների և շուկայում շրջանառվող արժեթղթերի տեսքով վաճառքի և հետգնման գործարքների գծով:

Նման գրավի համար գործում են Սվոպերի և ածանցյալ գործիքների միջազգային ասոցիացիայի (ISDA) կողմից հաստատված ստանդարտացված գլխավոր համաձայնագրի պայմանները: Սա նշանակում է, որ որպես գրավ ստացված/տրամադրված արժեթղթերը կարող են գրավադրվել կամ վաճառվել գործարքի գործողության ժամկետի ընթացքում, սակայն պետք է վերադարձվեն մինչև գործարքի ավարտը: Այս պայմանները յուրաքանչյուր պայմանագրային կողմին իրավունք են տալիս նաև դադարեցնել համապատասխան գործարքը, եթե պայմանագրային կողմն է վիճակի չէ գրավ տրամադրել:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Վաճառքի և հետգնման պայմանագրեր	-	(14,697,826)	(14,697,826)	14,697,826	-	14,697,826
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	-	(14,697,826)	(14,697,826)	14,697,826	-	14,697,826

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրերի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ

Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների տեսակներ	Ճանաչված ֆինանսական ակտիվի/ պարտավորության համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցված՝ ճանաչված ֆին. պարտավորության/ ակտիվի համախառն գումար	Ֆին. վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆին. ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չհաշվանցված գումարներ		
				Որպես գրավ ստացված դրամական միջոցներ	Ֆինանսական գործիքներ	Զուտ գումար
Վաճառքի և հետգնման պայմանագրեր	(8,897,841)	-	(8,897,841)	8,897,841	-	8,897,841
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(8,897,841)	-	(8,897,841)	8,897,841	-	8,897,841

Վերը նշված աղյուսակներում բացահայտված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն և զուտ գումարները չափվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ հիմունքով.

- ածանցյալ ակտիվները և պարտավորությունները չափվում են իրական արժեքով,
- վաճառքի և հետգնման պայմանագրերից, հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրերից, արժեթղթերի որպես փոխառություն տրամադրելու և ստանալու գործարքներից առաջացող ակտիվները և պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով

Վերը նշված աղյուսակներում ներկայացված գումարները, որոնք հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, չափվում են նույն հիմունքով:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար:

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բանկերից ստացված վարկերը, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների տարբերակված պորտֆելը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու արդյունավետ բավարարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այդ հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելիությամբ ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- իրացվելիության և ֆինանսավորման ծրագրերի անընդհատության ապահովում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ֆինանսական ակտիվների, պարտավորությունների և փոխառությունների տրամադրելու պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չգեղջված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Աղյուսակներում ներկայացված ներհոսքի և արտահոսքի ընդհանուր համախառն գումարն իրենից ներկայացնում է պայմանագրային չգեղջված դրամական միջոցների հոսքերը ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ փոխառությունների տրամադրելու պարտավորվածությունների գծով: Ֆինանսական երաշխավորությունների պայմանագրերի համար երաշխավորության առավելագույն գումարը տեղաբաշխվում է այն ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում երաշխավորությունը կարող է ետ կանչվել:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցախանց և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	122,954	-	-	-	-	122,954	122,954
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	162	221,473	987,537	810,762	32,004,720	34,024,654	16,410,107
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	131,947	873,574	383,484	-	1,389,005	1,316,323
Այլ ֆինանսական ակտիվներ	53,037	-	-	-	-	53,037	53,037
Ացանցյալ ակտիվներ							
Համախառն գումարով մարվող ածանցյալ գործիքներ							
- Ներհոսք	-	860,581	-	-	-	860,581	4,766
- Արտահոսք	-	(855,815)	-	-	-	(855,815)	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	176,153	358,186	1,861,111	1,194,246	32,004,720	35,594,416	17,907,187
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(14,727,821)	(2,772)	(4,109)	(7,942)	(18,178)	(14,760,822)	(14,728,480)
Այլ ֆինանսական պարտավորություններ	(5,487)	-	-	-	-	(5,487)	(5,487)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(14,733,308)	(2,772)	(4,109)	(7,942)	(18,178)	(14,766,309)	(14,733,967)
Իրացվելիության գուտ պահուստ ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով	(14,557,155)	355,414	1,857,002	1,186,304	31,986,542	20,828,107	3,173,220

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցախանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ներհոսքի (արտահոսքի) ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,499	-	-	-	-	18,499	18,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	430	-	3,012,021	369,084	8,752,185	12,133,720	10,051,549
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	130,714	-	-	-	-	130,714	130,714
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	528,572	463,345	-	-	991,917	967,437
Այլ ֆինանսական ակտիվներ	120	-	-	-	-	120	120
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	149,763	528,572	3,475,366	369,084	8,752,185	13,274,970	11,168,319
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(8,958,982)	(2,999)	(4,484)	(8,676)	(34,404)	(9,009,545)	(8,942,106)
Այլ ֆինանսական պարտավորություններ	(1,889)	-	-	-	-	(1,889)	(1,889)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(8,960,871)	(2,999)	(4,484)	(8,676)	(34,404)	(9,011,434)	(8,943,995)
Իրացվելիք զուտ պահուստ ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով	(8,811,108)	525,573	3,470,882	360,408	8,717,781	4,263,536	2,224,324

Վերը բերվող աղյուսակներում ներկայացված դրամական միջոցների ներհոսքի/(արտահոսքի) համախառն անվանական գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չգեղչված դրամական միջոցների հոսքերը, որոնք վերաբերում են ռիսկերի կառավարման նպատակով պահվող ածանցյալ ֆինանսական ակտիվներին և պարտավորություններին: Այս բացահայտումն արտացոլում է զուտ հիմունքով մարվող ածանցյալ գործիքների զուտ գումարը, ինչպես նաև ներհոսքի և արտահոսքի համախառն գումարներն այն ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար, որոնք միաժամանակ մարվում են համախառն հիմունքով (օրինակ՝ արտարժույթային ֆորվարդային պայմանագրերը և արտարժույթային սվոպերը):

«Ռեմեսա» ՓԲԸ
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցալահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	122,954	-	-	-	-	-	122,954
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	-	4,766	-	-	-	-	4,766
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	161	216,140	1,722,051	10,920,752	3,392,100	158,903	16,410,107
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	130,389	1,185,934	-	-	-	1,316,323
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	57,153	57,153
Այլ ակտիվներ	53,337	-	-	-	-	-	53,337
Ընդամենը ակտիվներ	176,452	351,295	2,907,985	10,920,752	3,392,100	216,056	17,964,640
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(14,701,371)	(3,389)	(6,777)	(16,943)	-	-	(14,728,480)
Ընթացիկ հարկային պարտավորություն	(104,671)	-	-	-	-	-	(104,671)
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	(248,698)	(248,698)
Այլ պարտավորություններ	(20,758)	-	-	-	-	-	(20,758)
Ընդամենը պարտավորություններ	(14,826,800)	(3,389)	(6,777)	(16,943)	-	(248,698)	(15,102,607)
Զուտ դիրքը	(14,650,348)	347,906	2,901,208	10,903,809	3,392,100	(32,642)	2,862,033

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վերլուծությունն՝ ըստ ակնկալվող մարման ժամկետների:

հազ. դրամ	Ցալահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,499	-	-	-	-	-	18,499
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	428	-	3,285,761	6,619,734	145,626	-	10,051,549
Ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	130,714	-	-	-	-	-	130,714
Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրված փոխառություններ	-	513,177	454,260	-	-	-	967,437
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	62,838	62,838
Այլ ակտիվներ	1,311	-	-	-	-	-	1,311
Ընդամենը ակտիվներ	150,952	513,177	3,740,021	6,619,734	145,626	62,838	11,232,248
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Ֆինանսական կազմակերպություններին վճարվելիք գումարներ	(8,899,395)	(2,258)	(10,163)	(30,290)	-	-	(8,942,106)
Ընթացիկ հարկային պարտավորություն	(50,429)	-	-	-	-	-	(50,429)
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	-	(136,009)	(136,009)
Այլ պարտավորություններ	(17,176)	-	-	-	-	-	(17,176)
Ընդամենը պարտավորություններ	(8,967,000)	(2,258)	(10,163)	(30,290)	-	(136,009)	(9,145,720)
Զուտ դիրքը	(8,816,048)	510,919	3,729,858	6,589,444	145,626	(78,856)	2,086,628

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի հետևյալ վարկային գծերը.

- Գրավով չապահովված 100 միլիոն դրամ գումարով օվերդրաֆտ, որի գծով տոկոսադրույքը կազմում է 11.5%:
- Գրավով չապահովված 90 միլիոն դրամ գումարով օվերդրաֆտ, որի գծով տոկոսադրույքը կազմում է 10.5%.

16 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար որպես բաղկացուցիչ սահմանված հոդվածները:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նվազագույն կապիտալի չափը կազմում է 300,000 հազար դրամ, իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության նվազագույն ցուցանիշը՝ 12%: Ընկերությունը պահպանում է կապիտալի համարժեքության ցուցանիշն իր գործունեության բնույթին և ծավալներին համապատասխանող մակարդակում:

Ստորև ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2017թ. հազ. դրամ (աուդիտ չանցած)	2016թ. հազ. դրամ (աուդիտ չանցած)
Հիմնական կապիտալ	1,868,537	1,520,864
Լրացուցիչ կապիտալ	934,269	526,180
Մեխական միջոցներ (կապիտալ)	2,802,806	2,047,044
Ռիսկով կշռված ակտիվներ	21,984,064	8,504,546
Ընդամենը կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների տոկոսային հարաբերակցություն (ընդամենը կապիտալի հարաբերակցություն)	12.75%	24,07%

17 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունն ամբողջությամբ ապահովագրված չէ իր գրասենյակի և սարքավորումների վնասներից, գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեության հետևանքով կապված պատահարների արդյունքում գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Ղեկավարությունը գտնում է, որ նման վարույթների կամ հայցերի արդյունքում առաջացող պարտավորությունները, եթե այդպիսիք լինեն, զգալի բացասական ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործունեության արդյունքների վրա:

(զ) Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

18 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության հավասար մասնաբաժիններով սեփականատերերն են հաղիսանում Արայիկ Կարապետյանը և Էդուարդ Մարությանը, ովքեր հանդիսանում են Ընկերության վերջնական վերահսկող անձիք:

(բ) Գործարքներ Տնօրենների խորհրդի և ղեկավարության անդամների հետ

Ստորև ներկայացված է աշխատակազմի գծով ծախսերում ներառված ընդհանուր վարձատրությունը 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	<u>16,300</u>	<u>22,558</u>

Այս գումարները ներառում են Տնօրենների խորհրդի և ղեկավարության անդամների դրամային և ոչ դրամային հատուցումները:

Ստորև ներկայացված են Վարչության անդամների հետ գործարքների գծով շահույթի կամ վնասի կազմում արտացոլված գումարները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

	2017թ. հազ. դրամ	2016թ. հազ. դրամ
Վարձակալության գծով ծախսեր	<u>8,750</u>	<u>8,750</u>

(զ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմեր են հանդիսանում Ընկերության հետ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունների հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2017թ.		2016թ.	
	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %	հազ. դրամ	Միջին արդյունավետ տոկոսադրույք %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
ԱԿՏԻՎՆԵՐ				
Տրված փոխառություններ				
- ՀՀ դրամով	1,041,619	12.5%	395,620	12.5%
- ԱՄՆ դոլարով	274,704	9%	571,817	12%
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր				
- ՀՀ դրամով	40,865	12.5%	17,187	13.9%
- ԱՄՆ դոլարով	23,359	7.3%	46,704	8.8%
Շահույթ կամ վնաս				
Տոկոսային եկամուտ	160,472		84,072	
Տոկոսային ծախս	(2,113)		(22,896)	
Այլ եկամուտ	8,112		8,822	
	166,471		69,998	

Կապակցված կողմերի հետ գործարքների գծով մնացորդների մեծ մասը ենթակա է մարման մեկ տարվա ընթացքում: Կապակցված կողմերի հետ գործարքները գրավով ապահովված չեն:

19 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

(ա) Հաշվապահական հաշվառման դասակարգում և իրական արժեք

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց իրական արժեքներին 2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Իրական արժեքի գնահատման նպատակն է ներկայացնել այն մոտավոր գինը, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար՝ չափման ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է դիտվի որպես իրացման գին՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների փոխանցման ժամանակ:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշվող գների կամ դիլերների կողմից գնանշվող գների վրա: Մյուս բոլոր ֆինանսական գործիքների իրական արժեքներն Ընկերությունը որոշում է գնահատման մեթոդներ կիրառելով:

Գնահատման մեթոդների նպատակն է ստանալ այն իրական արժեքը, որն արտացոլում է այն գումարը, որը կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու համար շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում՝ չափման ամսաթվի դրությամբ:

(բ) Իրական արժեքի հիերարխիա

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալները դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են հետևյալ տվյալները՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որոնց շրջանակներում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ				
- Ածանցյալ ակտիվներ	-	4,766	-	4,766
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	16,251,204	-	16,251,204
- Կորպորատիվ բաժնետոմսեր	-	-	158,903	158,903
	-	16,255,970	158,903	16,414,873

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակների կտրվածքով: Գումարները հիմնված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարների վրա:

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ	-	10,051,549	-	10,051,549
	-	10,051,549	-	10,051,549